# Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

## ՎԱՀԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ՝ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31–ԻՑ ՀՈՒՆԻՍԻ 2-Ը ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**

  Վահան Մարտիրոսյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

  ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

  Գերմանիայի Դաշնային Հանրապետություն՝ քաղաք Լայպցիգ:
  2017 թվականի մայիսի 31–ից հունիսի 2-ը:

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

  Միջազգային տրանսպորտային ֆորումի գլխավոր քարտուղար Խոսե Վիեգաս

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն Միջազգային տրանսպորտային ֆորումի «Տրանսպորտի կառավարումը» խորագրով տարեկան նախարարական հանդիպմանը:

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է «Տրանսպորտի կառավարումը» խորագրով միջազգային տրանսպորտային ֆորումի աշխատանքներին:

Միջոցառմանը մասնակցել են ավելի քան 50 պետություն ներկայացնող տրանսպորտի նախարարներ, միջազգային տրանսպորտային կազմակերպությունների, խոշորագույն գիտական և կրթական հաստատությունների, մասնավոր ընկերությունների բարձրաստիճան ներկայացուցիչներ և լրատվամիջոցներ:

Միջազգային տրանսպորտային ֆորումի «Տրանսպորտի կառավարումը» խորագրով տարեկան նախարարական հանդիպումը նվիրված էր ժողովրդագրական միտումներին, շրջակա միջավայրի և առողջության վրա տրանսպորտի թողած ազդեցությանը, նոր

տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների օգտագործմանը տրանս-պորտային ենթակառուցվածքներում և տրանսպորտի կառավարման գործընթացում:

Ֆորումի շրջանակներում կայացած նախարարական փակ նիստի ընթացքում քննարկվել են Միջազգային տրանսպորտային համաժողովի 2017թ. տարեկան բազմակի թույլտվությունների քանակը և հետագա տարիների ընթացքում դրանց բաշխումը, քննարկվել է նաև ԵՄ տարածքում միջազգային ավտոմոբիլային բեռնափոխադրումների սահմանափակումներին և չափորոշիչներին առնչվող բազմաթիվ հարցեր:

Դրան զուգահեռ, քննարկվել են նաև շրջակա միջավայրի վրա տրանսպորտի ազդեցության նվազեցմանը, տրանսպորտի ոլորտում նոր աշխատատեղեր ստեղծելու հնարավորություններին, տրանսպորտային անվտանգության բարձրացմանը, ինչպես նաև տրանսպորտի կառավարման արդյունավետությանն առնչվող և ոլորտը կանոնակարգող այլ խնդիրներ:

Նախարարական նիստի ընթացքում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանը ներկայացել է ելույթով և նշել, որ Հայաստանը բարձր է գնահատում Տրանս-Եվրոպական տրանսպորտային համակարգի հիմնական միջանցքներում ներգրավված լինելը, ինչը նպաստում է ոչ միայն Եվրամիության հետ Հայաստանի Հանրապետության հարաբերությունների առաջխաղացմանն ու ամրա-պնդմանը, այլև խթանում է Հայաստանի Հանրապետության տնտեսությանը՝ ներգրավելով նոր ներդրումներ, բացելով նոր շուկաներ, ապահովելով զբաղվածություն և բարձրացնելով արտադրողականությունը:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանը անդրադարձել է նաև Հայաստանում տրանսպորտի կառավարմանն առնչվող խնդիրներին և դրանց լուծմանն ուղղված միջոցառումներին, ներկայացրել այս ոլորտում առկա զարգացման ծրագրերը, ինչպես նաև ներկայում մշակվող տրանսպորտի ոլորտի արդյունա-վետության բարձրացմանն ուղղված նոր քաղաքականությունը, որի կիրառումը կնպաստի ճանապարհային անվտանգության և սպասարկման որակի բարձրացմանը:

## ♦ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ֆորումի շրջանակներում տեղի են ունեցել Միջազգային տրանսպորտային ֆորումի գլխավոր քարտուղարի ընտրություններ: Տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար հայտ էին ներկայացրել Կանադայի և Կորեայի Հանրապետության ներկայացուցիչները:

Գաղտնի փակ ընտրությունների արդյունքում Միջազգային տրանսպորտային ֆորումի գլխավոր քարտուղար ընտրվեց Կորեայի Հանրապետության ներկայացուցիչ Յոունգ-Թաե Կիմը:

Միջոցառման ընթացքում Ղազախստանը և Արաբական Միացյալ Էմիրությունները դարձան Միջազգային տրանսպորտային կազմակերպության անդամ:

Հայկական պատվիրակությունը նաև հանդիպումներ է ունեցել տրանսպորտի ոլորտը ներկայացնող նախարարների և բարձրաստիճան պաշտոնյաների հետ՝ երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկման համար:

Հայկական պատվիրակությունը Մոլդովայի պատվիրակության հետ քննարկել է երկու երկրների միջև իրականացվող ավտոմոբիալային բեռնափոխադրումների համար փոխանակվող թույլտվությունների քվոտաների հարցը:

Միևնույն ժամանակ հայկական պատվիրակության և վրացական պատվիրակության միջև քննարկվել են երկու երկրների միջև կանոնավոր և ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների իրականացման հետ կապված հարցերը:

Հաջորդ Միջազգային տրանսպորտային ֆորումի «Անվտանգություն» խորագրով համաժողովը կայանալու է 2018թ. մայիսի 23-25-ը: